*Լավությո՛ւն արա, թեկուզ ջո՛ւրը գցիր՝ մի օր առաջդ կգա…*

# ԲԱՐԵԳՈՐԾ

**BAREGORTS** 2016, սեպտեմբեր-հոկտեմբեր № 33 **БАРЕГОРТС**

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՌԱՄՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՍՄՈՒՆՔԻ 5-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ

Հիրավի հոբելյանների համազումար

Հայկական երկու հանրապետությունների անկախության քառորդդարյա տարելիցին էր նվիրված ամերիկահայ բարերարների նախաձեռնությամբ, Ալեք Բաղդասարյանի ղեկավարությամբ, ՀՀ սփյուռքի ու ԼՂՀ գիտության, կրթության և սպորտի նախարարությունների, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի», Երևանի պետական համալսարանի պրոֆեսորների, Լհանրապետության նշանավոր դերասանների աջակցությամբ ու մասնակ-ցությամբ Արցախի մշակութային մայրաքաղաք Շուշիում անցկացվեց ամենամյա 5-րդ համահայկական մանկապատանեկան ասմունքի փառատոնը:

Թերթիս նախորդ համարներում (տե՛ս, մասնավորապես, № 30) առիթ ունեցել ենք լուսաբանելու նախորդ 4 փառատոները: 5-րդն իր կազմակերպվածությամբ արտաքուստ կարծես նման էր նախորդներին, սակայն բովանդակությամբ էապես տարբեր էր նրանցից:

Հայաստանի և Արցախի անկախ պետականությունների 25-ամյակին ձոնված փառատոնն ուներ «Իմ սուրբ հայրենիք» նշանաբանը, որն արդեն ուղղորդել էր հայ երեխաներին արտասանվող բանաստեղծություններն ընտրելիս: Նրանք էլ հայ դասական ու ժամանակակից հեղինակներից ընտրել էին մեր հայրենիքն ու պետականությունը արժևորող բանաստեղծություններ, որոնք հնչում էին տարբեր երկրներից ժամանած հայ երեխաների շուրթերով: Բոլոր մասնակիցները Արցախ էին ժամանել տեղերում մրցակցությամբ հաղթելով իրենց տարեկիցներին, իսկ այստեղ՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցի դահլիճում պարտվողներ չկային, քանի որ փառատոնը, լավագույններին ու շնորհալիներին հայտնաբերելուց բացի, ուներ այլ գերխնդիր՝ հայաստանցի ու սփյուռքահայ երեխային ծանոթացնել մեր ազատագրված հայրենիքին, նրա մշակույթին ու պատմությանը, նաև հենց միմյանց: Փառատոնի ավագ տարիքային խմբի մրցանակակիրներից մեկը՝ բերձորցի Հովհաննես Արեյանը, անկեղծորեն խոստովանեց. «Երկրորդ տարին եմ մասնակցում, բայց ես մրցանակի կամ նվերի համար չեմ գալիս, այլ այն 4–5 հրաշալի օրերի, որ գիտամշակութային բարձր մթնոլորտում անցկացնում եմ Շուշիում ու ողջ Արցախում՝ տարբեր տեղերից ժամանած իմ տարեկից հայ երեխաների հետ՝ ձեռք բերելով լավ ընկերներ»:

Այս անգամ ոչ միայն Երևանի ու Գյումրիի, Ստեփանակերտի ու Շուշիի և Արցախի հինգ շրջանների դպրոցներից, այլև ՌԴ Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ քաղաքներից, Իրանի Թեհրան քաղաքից, Լիբանանից, Վրաստանից իրենց ուղեկցող ուսուցիչների հետ ժամանած շուրջ հարյուր միմյանց անծանոթ հայ երեխաներ միասին վայելեցին Արցախում գտնվելու հաճույքը, շրջեցին պատ-

մամշակութային վայրերով, ճանաչեցին իրենց հայրենիքը և արժևորեցին, էլեկտրոնային հասցե-ներ փախանակեցին, մտերմանում ու հարազատացան:

Կազմակերպիչները ամեն բան հոգացել էին առաջին անգամ Արցախ մեկնողների ճամփորդությունը հաճելի ու հետաքրքիր դարձնելու համար:

Բացի իրանահայ և արցախցի երեխաներից՝ մեկնողների ուղևորությունն սկսվեց Երևանի պետական համալսարանի բակից: Ճանապարհին նախաճաշի և հանգստի անհրաժեշտ կանգառներից, Նորավանքի եկեղեցական համալիր ու խտազնացությունից զատ՝ մի անմոռաց հիշողություն էլ ունեցան՝ այցելելով Ջանզակատուն գյուղում Պարույր Սևակի տուն-թանգարան և այգի, ուր թաղված է 1971 թ. հունիսի 17-ին ավտոաղետի զոհ դարձած մեծ բանաստեղծը, գրականագետն ու թարգմանիչը:

Աշակերտներն իրենց ուղեկցողների հետ միասին եղան թանգարանի ցուցասրահում, տեսան Պ. Սևակի անձնական իրերն ու մյուս ցուցանմուշները, լսեցին բանաստեղծություններ հեղինակի ընթերցմամբ: Գ. Մելիքյանը թանգարանի գրախանութից աշակերտներին նվիրեց իրենց նախընտրած գրքերը: Այցելուները հյուրասիրվեցին Պ. Սևակի ձեռքով տնկված ծառերի ծիրանով, ծաղիկներ սփռեցին նրա շիրմաքարին և նրա շուրջը բոլորած՝ ունկնդրեցին պրոֆ, Ս. Մուրադյանի հետաքրքիր բանախոսությունը մեծ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մասին:



Ունկնդրում են ...

Բուն իրադարձությունները, սակայն, տեղի էին ունենալու Արցախի մշակութային մայրաքաղաք Շուշիում:

ՀՀ սփյուռքի և ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունների, Շուշիի քաղաքապետարանի ու շրջանի վարչակազմի պաշտոնատարները ոչ միայն պատշաճ հանդիսավորություն հաղորդեցին փառատոնին, քաջալերեցին ողջույնի խոսքով, այլև սահմանված մրցանակներ, թանկարժեք նվերներ ու հուշանվերներ ու պատվոգրեր հանձնեցին փառատոնի բոլոր մասնակիցներին:

Երեք աշխատանքային օր տևած փառատոնում անվրեպ գործում էր լավերից լավագույններին ընտրելիս երբեմն դժվարին վիճակում հայտնվող գնահատող անաչառ ու պատկառելի (սա, ի դեպ, ուսուցիչների, ծնողների, ունկնդիրների և հենց մասնակիցների միասնական կարծիքն է) հանձնախումբը: Նախագահողը կրկին ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն էր:

93 երեխաների ասմունքը համբերատար լսող ու գնահատող այդ հանձնախմբում էին նաև ինքը՝ բարերար Ալեք Բաղդասարյանը, ամերիկահայ բարերարուհի տիկին Լիլիթ Բաղդասարյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆ.Գուրգեն Մելիքյանը, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ պրոֆ.

Սամվել Մուրադյանը, Արցախի Հանրապետության ժողովրդական արտիստ, բեմադրիչ Լեոնիդ Հարությունյանը, ՀՀ մշակույթի նախարարության խորեոգրաֆիկ թատրոնի տնօրեն Աղասի Թադևոսյանը, Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի բեմական խոսքի ավագ դասախոս Մարինե Մխիթարյանը, Ստեփանակերտի Հովհ. Թումանյանի անվան գրադարանի բարեհամբույր տնօրինուհին, ինչպես նաև նախորդ երկու փառատոների մասնակից, 2015 թ. փառատոնին առաջին մրցանակ շահած, այժմ արդեն մեծահամերգներով հանդես եկող ասմունքող, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանող Սիսիան Սեփանյանը: Ի դեպ, իր սեփական նախաձեռնությամբ նա հուշանվեր-մրցանակ հանձնեց գյումրեցի լավագույն ասմունքողներից մեկին:



Գնահատող հանձնախումբը՝ պարգևատրվածների հետ

Համահայկական այս փառատոնն իսկապես հայ արվեստի, մասնավորապես գեղարվեստական խոսքի տոն էր, որ բացվեց Զաքար սարկավագ Քեշիշյանի ղեկավարած երգչախմբի ելույթով: Հայաստանցի, արցախցի, մոտիկ ու հեռավոր սփյուռքի հայ երեխաները միխրճվել էին արևելահայ ու արևմտահայ դասականների՝ Խաչատուր Աբովյանի, Ռափայել Պատկանյանի, Հովհաննես Թումանյանի ու Ավետիք Իսահակյանի, Սիամանթոյի ու Դանիել Վարուժանի, Վահան Տերյանի ու Վահան Թեքեյանի, Եղիշե Չարենցի, Հովհաննես Շիրազի ու Համո Սահյանի, Սիլվա Կապուտիկյանի ու Պ. Սևակի, Վահագն Դավթյանի ու Գևորգ Էմինի, Հովհաննես Գրիգորյանի ու Դավիթ Հովհաննեսի, Ռոբերտ Եսայանի ու Վարանդի և այլ բանաստեղծների գեղարվեստական աշխարհները, ընտրել փառատոնի կարգախոսին համապատասխան կտորներ և գեղեցիկ գաղափարներ ու պատգամներն էին հնչեցնում բեմահարթակից: Իսկ դա հայ ընթերցասիրական լիցքեր պարունակող ազգային մեծ հարստություն է, որին բարեբախտաբար տիրապետում ու այդ ոգով լցվում է ներկա սերունդը: Եվ հենց ա՛յդ պատգամներով է դաստիարակվում այսօրվա ու վաղվա հայ զինվորը, դրանցից է իր ոգու անպարտելի ուժն ստանում հայրենիքը գիտակցորեն արժևորող սերունդը: Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցի դահլիճում իրենց հրաշալի ասմունքով առաջին մրցանակներ շահեցին կրտսեր տարիքային խմբում Մոսկվայից 8-ամյա Էրիկա Պետրոսյանը, միջին խմբում՝ Լիբանանից Պարույր Ղուկասյանը և ավագների խմբից՝ Բերձորից Արեն Հովհաննիսյանը:




Շուշիի Ավան պլազա հյուրանոցն այսպես դիմավորեց...

Արցախի սահմաններում իրավիճակն այսօր հանգիստ չէ: Խախուտ զինադադարի յուրաքանչյուր խախտում շարունակվող պատերազմ է, սակայն դա քիչ է խանգարում, որ Հայաստանում և Արցախում բնականոն ընթանա մշակութային կյանքը:

Օգոստոսի 4-ին տեղի ունեցավ ավարտական հանդիսությունը, պարգևներ հանձնելուն մասնակցեցին նաև Արցախի Հանրապետության ԿԳ մշակույթի և սպորտի նախարար պրն Սլավա Ասրյանը: Համերգը եզրափակվեց ելույթով ժողովրդական արտիստ Լ Հարությունյանի դեկավարած պոեզիայի թատրոնի, որը իրաշալի կատարումով հրամցրեց ազատամարտիկ և տաղանդավոր բանաստեղծ Ռոբերտ Եսայանի բանաստեղծություններից կազմված կոմպոզիցիայի բեմադրությունը:

Փառատոնը և՛ հանդիսավոր պահերին, և՛ հանգստի միջոցառումներին ուղեկցում էր ազատամարտիկ, Արցախի Հանրապետության վաստակավոր արտիստ Տ. Մկրտչյանի իրաշալի երգեցողությամբ:

Փառատոնի համազգային ու համապետական նշանակությունը կարևորելով՝ օգոստոսի 4-ին Շուշիի «Ավան Շուշի պլազա» հյուրանոց այցելեց նաև Արցախի Հանրապետության նախագահ պրն Բակո Սահակյանը: Թեև այս օրերին հատկապես խիստ բազմազբաղ էր հանրապետության նախագահը, սակայն նա որոշեց անձամբ ողջունել ավանդական դարձած փառատոնը և քաջալերել մասնակիցներին: Նախագահը նաև շնորհակալություն հայտնեց բոլոր կազմակերպիչներին և հատկապես՝ բարերար Ալեք Բաղդասարյանին, զնահատող հանձնամբին, շնորհավորեց մանավանդ արտերկրից ու Հայաստանից առաջին անգամ Արցախ եկած երեխաներին ու հաճույքով ունկնդրեց մրցանակակիր լավագույն ասմունքողներին:

Փառատոնը նշանավորվեց և մի այլ իրադարձությամբ: Արցախի Հանրապետության նախագահը երեխաների հետ միասին ներկա եղավ հյուրանոցի հարևանությամբ դեռևս անանուն նոր պուրակի (Աղասի Թադևոսյանը պայմանականորեն առաջարկեց կոչել «Ասմունքի պուրակ». թեև տրամաբանական, բայց քննարկելու խնդիր է) հիմնադրմանը և ինքն էլ տնկեց առաջին ծառը:

Ջերմ ու անկեղծ մթնոլորտում նա զրուցեց աշխարհի տարբեր ծայրերից ժամանած հայ երեխաների և նրանց ուղեկցողների հետ: Բոլորը բուռն հետաքրքրությամբ լսեցին արցախցիների հերոսական կամքի, փխրուն խաղաղության բարդությունների, սահմանին տիրող լարված իրավիճակների, խարդախ թշնամու ոտնձգությունների, հրադադարի խախտումների և հայ զինվորի արիության մասին: Նախագահը հաճույքով լուսանկարվեց իրեն շրջապատող հայ երեխաների հետ, որոնց համար նման առիթը չնախատեսված հրաշքի էր նման:



Փառատոնի մասնակիցների համար հաճելի ու անմոռանալի անակնկալ էր Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի այցելությունը: Մասնակիցներին ողջունելուց, փառատոնն արժևորելուց լավագույնների ասմունքը ունկնդրելուց և նոր պուրակում ծառատունկից հետո նա շրջապատվեց մասնակիցներով և լուսանկարվեց

Իսկ հրաժեշտի խարույկի շուրջը մինչև կեսգիշեր երգում ու պարում էին հարազատացած բոլոր մասնակիցները:

Հուզիչ էր օգոստոսի 5-ի առավոտը. Նախաճաշից հետո հասցեների փոխանակում, ողջագուրանքներ … Հրաժեշտից առաջ լուսանկարվելով՝ փառատոնի մասնակիցները հրաժեշտ տվին իր ազատության ու անկախության քառորդ դարը տոնող Արցախի մշակութային մայրաքաղաք Շուշիին՝ այնտեղ կրկին հանդիպելու ցանկությամբ:

ԱԿԱՆԱՏԵՍ

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԶԻՆՎՈՐԸ՝ ՀՈՎԱԿԻՄ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ



Հանրահայտ Խենթի շառավիղ Հովակիմ Տեր-Պողոսյան, որ գերադասում է անհայտ մնալ

Տեր-Պողոսյան ազգանունը հայերիս ամենևին էլ անծանոթ չէ: Մեծ թե փոքր՝ բոլորս գիտենք լեգենդ դարձած, հանճարեղ Րաֆֆու «Խենթը» վեպում կերպավորված իդեալ-հերոս Սամփսոնին կամ Վարդան Տեր-Պողոսյանին՝ հանրահայտ Խենթին:

Այս դեպքում խոսքը ազգանունների պատահական զուգադիպության մասին չէ, այլ ուղղակի նույն տոհմի շարունակող, նույնքան ազնիվ, ազգասեր ու հայրենասեր, շիտակ ու պատրաստակամ հայորդու: Հայրենիքի զինվորը միայն զորաբանակում կամ սահմանային առաջնագծում չի լինում: Զինվոր է նաև հայրենիքը ծաղկեցնողը, նրա կարիքներին անմիջաբար արձագանքողը, հոգսերը վերացնողը (այստեղից են հոգաբարձ – հոգս վերացնողն ու հոգաբարձությունը):

Ճարտարագետ–շինարար և իր պարտքը գիտակցող յուրատեսակ զինվոր է իրանահայ Հովակիմ Տեր – Պողոսյանը, որը նվիրվել է հայության մշակութային արժեքների պահպանության ու իր ազգակիցների կեցության մակարդակը բարձրացնելու գործին: Այժմ նա իր միջոցներով Իրանի Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում վերանորոգում է Րաֆֆու հայրական տունը:

Հայաստան և Արցախ գալիս է ոչ հաճախ, բայց նպատակային: Ուխտի է գնում Էջմիածին՝ Ս. Գայանե վանքի բակում թաղված իր մեծ հորեղբոր՝ Խենթի գերեզմանին: Գալիս է նաև Երևանի պետական համալսարան՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրենին այցելության: Սա էլ է նպատակային. այս ազնիվ հայորդին մարդու այն տեսակն է, որ հարազատի սրտացավությամբ է վերաբերվում իր հայրենիքին ու ազգակիցներին, զինվորի պարտաճանաչությամբ գիտի՝ որտե´ղ և ո´ւմ հասցնի իր անսակարկ օգնությունը:

Հետաքրքիր զրուցակից է Հովակիմ Տեր-Պողոսյանը և համեստ է սուրբգրյան բարեգործների նման: Չի սիրում իր մասին բարձրաձայնել: Մեր հիմնադրամին օգնությունը ձևակերպում է ոչ թե իր, այլ հարազատների անուններով: Նույնիսկ խնդրեց, որ իր ներկայությամբ ջնջեմ մեր զրույցի ձայնագրությունը: Ուրեմն,

ապավինելով հիշողությանը, ներկայացնեմ այդ զրույցից պատառիկներ:

Ամեն հայաստանյան այցելություն տոն է նրա համար, որ ովհետև գալիս է իր երազանքների երկիր: Լավն էլ է իրենը, վատն էլ: Ուրախ է, որ արդեն քառորդ դար տևող պետական անկախության շրջանում տեսնում է դրական տեղաշարժեր: Բայց և մտահոգ է ցավոք առկա խնդիրներով, մեզ անհարիր տհաճ երևույթներով: Նախոր համոզում ունի, որ բոլոր համազգային խնդիրները լուծում կստանան, անցանկալի երևույթները կվերանան, եթե լինի հայության համախումբ միասնականություն, եթե բոլոր քաղաքական կուսակցությունները միավորվեն հայոց պետականության շուրջ: Աննկուն լավատես ու համառ իրատես է նա, պարկեշտ, օրինավոր և օրինակելի հայ:

Թող շատ լինեն նրանմանները:

ԶՐՈՒՑԱԿԻՑ

## ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ նախորդ համարներում)

| | | | | |
|---|---|---|---|---|
| 307 | 18.07.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն. ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Էդիկ Դանիելյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի, 18.07.2016 | 20 000 |
| 308 | 21.07.2016 | Սարգսյան Ռուզաննա | Օգնություն ծառերի ծրագիր՝ իմ սիրելի մայրիկի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 309 | 21.07.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ իմ սիրելի քույրիկ Արաքսի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի ,11.07.2016 | 20 000 |
| 310 | 22.07.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Եվգենյա մայրիկի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 311 | 22.07.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի ընկերոջս՝ Դավիթ Հովհաննեսի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 312 | 25. 07.2016 | Ֆարշիդ Ալի Զահեդի | Tree projectin the memo8yof Vahagn MahtesiHakobiantsc from Farshid Ali Zahedi 300 EUR | 158 700 |
| 313 | 25.07.2016 | Հարությունյան Սվետլանա | ԵՊՀ արևելագիտ. ֆակ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից օգն. դիրքապահ զինվորներին | 43 000 |
| 314 | 25.07.2016 | Հարությունյան Սվետլանա | Գ.Բ. ԱՆՈՆԻՄ | 4 800 |
| 315 | 29.07.2016 | Մահդեսի Հակոբյանց Ռուբեն Սասուն | Օգն. «Վահագն Մահդեսի Հակոբյանց» պուրակի հիմնադր .Assistanceof Vahagn Mahdessi Hakobians Mem. park tree project | 150 000 |
| 316 | 03.08.2016 | Հակոբյան Զոյա | Tree projegt in the memory of Vahagn Mahdessi Hakobians from Zoia Hakobian 1 000 USD | 478 000 |
| 317 | 03.08.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգն. ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Ռոզա Հովսեփյան-Հարությունյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի, 11.07.2016 | 20 000 |
| 318 | 05.08.2016 | Գալստյան Սարգիս | Օգնություն ծառերի ծրագիր՝ ասմունքի 5-րդ փառատոնի առթիվ, «Ավան» ՓԲԸ | 100 000 |
| 319 | 09.08.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Խաչիկ Եդոյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի, 09.08.2016 | 20 000 |
| 320 | 12.08.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Արցախի թեմի առաջնորդ Պարգև սրբազանի մայրիկի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի, 12..08.2016 | 20 000 |
| 321 | 15.08.2016 | GURGEN MELIQYAN MULTICHILDREN FAMLY FOUNATION OF KHASHATAGH330 N BRAND BLVD STE 155 GLENDALE | /RFB/ 179718800// ARPEN CENTER DOMSTI ON POP OTHER /DONATION ARPEN CEMTER 5 000 USD | 2381000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | CA 91203-2324 | | |
| 322 | 23.08.2016 | Մարաշլյան Լևոն | Օգնություն ծառերի ծրագիր | 95 300 |
| 323 | 23.08.2016 | Սարգսյան Հակոբ, անձնգ. 438621710 | Cow project from Georgi & Ofelia Muradyants, 1 000 USD | 476 500 |
| 324 | 23.08.2016 | Տեր-Պողոսյան Սուրեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ իմ սիրելի տատիկի Հայկանուշ Մնացականյան-Տեր Պողոսյանի, և պապիկի՝ Սուրեն Տեր-Պողոսյանի հիշատակին | 47 650 |
| 325 | 23.08.2016 | Տեր-Պողոսյան Սուրեն | Օգնություն փախստականներին – 300 USD | 142 950 |
| 326 | 23.08.2016 | Տեր-Պողոսյան Քրիստինե | Օգնություն ԽԵԱ կովերի ծրագրին - 700 USD | 333 550 |
| 327 | 23.08.2016 | Տեր-Պողոսյան Սարինե | Օգնություն ԽԵԱ կովերի ծրագրին - 700 USD | 333 550 |
| 328 | 25.08.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր հիմնադրամի մեծ բարեկամ, իրաշք հայրենասեր շուշեցի Արկադի Օվանիսյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 329 | 25.08.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ իմ թանկագին համալսարանական ընկերոջ՝ Լևոն Եզեկյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի /17.08.2016/ | 20 000 |
| 330 | 25.08.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Վեներա Մանուկյանի և Բաբկեն Չուգասզյանի | 20 000 |
| 331 | 02.09.2016 | Գալստյան Սարգիս | Օգնություն ծառերի ծրագիր | 290 000 |
| 332 | 08.09.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ բազմամյա դասախոսներ Վարդգես Երնջակյանի և Սոնա Օդաբաշյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի | 20 000 |
| 333 | 14.09.2016 | Խաչատրյան Զավեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Արմեն Խաչատրյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի լեղի Քոքսի պուրակ – 100 USD | 47550 |
| 334 | 14.09.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Արմեն Սոսիկի Խաչատրյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի /2014, հունվարի 20/ | 20 000 |
| 335 | 14.09.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ուսման ծրագրին՝ Ստեփան Ալաջաջյան կրթաթոշակ՝ Թերեզա Ալաջաջյանի կողմից - 1 000 USD | 474 500 |
| 336 | 22.09.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Գաբրիելյան Դերենիկ | 10 000 |
| 337 | 28.09.2016 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ «Ռաֆիկ Ռոստոմ Թորոսյան» պուրակի համար | 94 200 |
| 338 | 06.10.2016 | Ալտիպարմակյան Ժաքուես Jacques Altiparmakian | Օգնություն | 529 000 |
| 339 | 07.10.2016 | GURGEN MELIQYAN MULTICHILDREN FAMLY FOUNATION OF KHASHATAGH330 N BRAND BLVD STE 155 GLENDALE CA 91203-2324 | RFB / 183994604// STUDENT TUITIONS POP OTHER? DONATION – 5 000 USD | 2 372 450 |
| 340 | 12.10.2016 | Թորոսյան Ռուբիկ. Thorossian Roobik | Օգնություն - 1 000 USD | 475 340 |
| 341 | 20.10.2016 | Ֆունդուկյան Վարդան | Student toitionFundukian Vardan & Sona- 500 USD | 238 500 |
| 342 | 20.10.2016 | Մելիքյան Գուրգեն | Tree Project Nazaret Akius & Manuela Akius – 50 EUR | 26 300 |
| 343 | 20.10.2016 | Մելիքյան Գուրգեն | Book project Ishkhan Babajanian – 60 USD | 28 620 |
| 344 | 27.10.2016 | Գույումջյան Կիրակոս | Կիրակոս Գույումջյանի գումարը Ուռեկանի համայնքի դպրոցի աշակերտների և ուսուցիչների համար - 3 000 USD | 1 416 000 |

Շարունակելի

# 2016 թ. ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ՝ ԽԵԱ ԾՐԱԳՐՈՎ ՍՏԱՑԱԾ ԿՈՎԵՐԻ ՑՈՒՑԱԿ

(Սկիզբը՝ նախորդ համարներում)

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Բնակավայրը | Երեխաների թիվը | Կովերի քանակը | Բարեգործ - հովանավորները | Կովի N |
|---|---|---|---|---|---|---|
| 304 | Հայրապետյան Գայանե<br>Բակունց Ստյոպա | . գ.Հերիկ | 4 | I կով | Չարչյան Դավիթ /ԱՄՆ/ | 5942 |
| 305 | Ստեփանյան Մանյա<br>Զաղոյան Սարգիս | ք.Բերձոր | 4 | I կով | Մոխթարյան Օհաննես և Վանուշ /ԱՄՆ/ | 5921 |
| 306 | Եղիազարյան Էդուարդ<br>Հակոբջանյան Արաքսյա | ք.Բերձոր | 4 | I կով | Տեր-Սահակյան Սյուզան /ԱՄՆ/ | 5917 |
| 307 | Մկրտիչյան Մարինե<br>Վելյան Հայկ | գ. Հարար | 4 | I կով | Հայրապետյան Արմեն և Էլեոնորա /ԱՄՆ/ | 5967 |
| 308 | Ֆրոլով Վիկտոր<br>Սարգսյան Էլինա | գ. Սանասար | 4 | I կով | Քանյան Նիք և Մերի /ԱՄՆ/ | 6000 |
| 309 | Խաչատրյան Գոհարիկ<br>Գաբրիելյան Հովհաննես | գ. Հոչանց | 4 | I կով | Կյուրեղյան Վարուժան և Էմմա /ԱՄՆ/ | 5930 |
| 310 | Միրումյան Աննա<br>Հարությունյան Լյովա | գ. Աղավնո | 6 | I կով | Տեր-Պողոսյան Սարինե | 5950 |
| 311 | Վարդանյան Լուսինե<br>Մեսրոպյան Գրիշա | Գ. Միրիկ | 6 | I կով | Տեր-Պողոսյան Քրիստինե | 325081 |
| 312 | Թադևոսյան Միհրան<br>Դիլաքյան Նազիկ | ք. Բերձոր | 4 | I կով | Մեսրոպյան Սերոժ և Մեդիկ /ԱՄՆ/ | 5948 |
| 313 | Մանուկյան Գրիգոր<br>Աբրահամյան Կարին | ք.Բերձոր | բացառ. | I կով | Հովհաննիսյան Արկադի և Իրեն /ԱՄՆ/ | 5913 |
| 314 | Գրիգորյան Ռոբերտ<br>Գրիգորյան Սիրանուշ | գ. Աղավնատուն | բացառ. | I կով | Բալյան Հարութ – Րաֆֆի և Փեթի /ԱՄՆ/ | 5956 |
| 315 | Փիլոյան Արտյոմ<br>Ծատրյան Ռոզա | ք. Բերձոր | 4 | I կով | Փափայանց Շիլա /ԱՄՆ/ | 5901 |
| 316 | Ազախանովա Մարիամ /միայնակ/ | ք.Միջնավան | 7 | I կով | Մուրադյանց Գեորգի և Օֆելյա /ԱՄՆ/ | 5917 |
| 317 | Համբարձումյան Մարինե /միայնակ/ | գ.Աղավնատուն | 6 | I կով | Մարգարյան Ռուբեն և Վալենտին /ԱՄՆ/ | 5906 |
| 318 | Վանյան Անուշ<br>Հովհաննիսյան Արամ | ք. Կովսական | 5 | I կով | Նազարյան Արմեն Մովսեսի /ԱՄՆ/ | 5907 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 319 | Ոսկանյան Արմեն Դաբբինյան Նունե | գ. Արվական | 6 | I կով | Փիրջանյան Սուրեն /ԱՄՆ/ | 5946 |
| 320 | Գաբրիելյան Լուսինե Հովհաննիսյան Կարո | ք. Բերձոր | 6 | I կով | Թորոսյան Ռուբիկ /ԱՄՆ/ | 5955 |

Շարունակելի

# ՄԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Գոհար Մարտիկյան, Ապրելու բանաձև, Եր. 2014, 343 էջ:
2. Արտաշես Պապոյան, Հայագիտական հետազոտություններ, Եր., 2007, 836 էջ:
3. Վարդան Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, 347 էջ:
4. Սամվել Մուրադյան, Գրական հանգրվաններ, գիրք Ա, Եր. 2003 թ., 496 էջ:
5. Արովյանագիտական 5 /հոդվածների ժողովածու, Եր. 2012, 120 էջ:
6. Լենդրուշ Ալոյան, §Մշակի¦ հրապարակախոսները 19-րդ դարավերջ, 20-րդ դարասկիզբ, Եր. 2014, 256 էջ:
7. Հենրիկ Էդոյան, Հին եգիպտական մեռյալների գիրքը, 10 օրինակ, Եր. 2004, 260 էջ
8. Հայկ Դեմոյան, Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, 10 օրինակ, 2002 թ.
9. Արցախ Բունիաթյան, Արյունոտ օրեր, Մարտակերտ 1993, գիրք 3, 2000, 402 էջ:
10. Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից, Եր., 2015, 175 էջ:
11. Թադևոս Չարչյան, Միջին պարսկերեն և պարթևերեն ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2015, 45 էջ:
12. Ներսես Մկրտչյան, Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենի բարբառներում, Եր., 2007 թ., 318 էջ:
13. Լուսինե Սահակյան, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանունները ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Եր., 2007 թ.,307 էջ:
14. Վարուժան Խստուր, Քառյակներ, 2014, 192 էջ:
15. Նիկոլայ Հովհաննիսյան, Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները, Եր., 2015, 52 էջ:
16. Արթ. Իսրայելյան, Դիվանագիտական և քաղաքական տերմինների հայերեն-արաբերեն բառարան, Եր., 2014, 112 էջ
17. М. Мелкумян, Русский язык, Եր. 2010, 100 էջ
18. Հրաչիկ Սիմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1-ին, 2003, 814 էջ:
19. Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Եր. 2005:
20. Ա. Ավագյան, Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Եր. 2004, 277 էջ:
21. Հոդվածների ժողովածու ,Արևելագիտության հարցեր, հ. 10, Եր. 2015:
22. Ս. Մխիթարյան, Հույս և սպասում, Եր. 2015, 152 էջ:

23. Անցյալի ապագան, Հոդվածների ժողովածու, Եր.,ԵՊՀ հրատ., 2015, 114 էջ:
24. Գ.Ա. Պետրոսյան, Հ.Գ. Թումանյան, Զմեռային սպորտաձևերի և առնչակից զիտաձյուղերի ռուս-հայերեն բառարան: Եր., §Ասողիկ¦, 2002, 240 էջ:
25. Հայոց եղեռնապատումի պոեզիա: Եր., ԵՊՀ հրատ.,2015, 296 էջ
26. Արամ Գասպարյան, Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. համագործակցությունից առճակատում (1908-1914): Եր., §Գիտություն¦ հրատ., 2016, 196 էջ:
27. Հենրիկ Էդոյան, Ընտրանի, Եր. §Հայագիտակ¦, 2016, 800 էջ:
28. Տիգրան Լևոնյան, Վերադարձ, Եր.,§Վան-Արյան¦ հրատ., 2016, 96 էջ:
29. Ալեքսանդր Հարությունյան, Սերունդներ և Եղելություններ,. §Լիմուշ¦ հրատ., 2015:

## §ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ¦ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սեփանակերտ – Երևան ճանապարհի Երևանյան մայրուղու 55-րդ կմ-ից սկսվող «Աերժ Փափայանց» պուրակին հաշորդ հատված ը կոչել մեր հիմնադրամի մեծ բարեկամ, շուշեցի Արկադի Հովհաննիսյանի անունով և այն անվանել «Արկադի Հովհաննիսյանի պուրակ-ծառուղի»:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը տեղեկացնում է, որ հետևյալ միայն վճարելու է՝

- ❖ դիրքապահ զինվոր ուսանողների
- ❖ երկկողմանի ծնողազուրկ ուսանողների
- ❖ սիրիահայ ուսանողների
- ❖ Բերձորում բնակվող ուսանողների (մասնակիորեն)

ուսման վարձավճարները:

Դիմումները բոլոր աշխատանքային օրերին ընդունվում են Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկանի աշխատասենյակում մինչև 2017 թ. փետրվարի 20-ը:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

¶ÈÊ²ì àð ÊØ´²¶Æð`ê² Øì º ÈØàôð²¸Ú²Ü
µ³Ý.·Ç. ¹áÏï áñ, åñáý»ëáñ
ÊØ´²¶ð²Î²¼Ø` ²ì²¶Ú²Ü²,  պան.·իտ.¹ոկտեր, åñáý»ëáñ
Øº ÈÆøÚ²Ü¶,  պան.·իտ. Ãեկն., åñáý»ëáñ
ê²ü²ðÚ²Ü²Ȩ  åատմ.·իտ. Ãեկն., åñáý»ëáñ

*Ð³ Ù³ ñÇß³ ñí ³ Í ùÁ ¨ Ó¨³ í áñáõÙÁªê . Øáõñ³ ¹Û³ Ý Ç:*

î å ³ ù³ Ý³ ÏÁ` 99: Â»ñÃÁ µ³ Å³ Ýí áõÙ ¿ ³ Ýí ×³ ñ*:*

**Ê Ùµ³ · ñáõÃÛ³ Ý Ñ³ ëó»Ýն ի ե ռ ախտ ս ն ե ր ը`**

º ñ¨ ³ Ý 375025, ² µáí Û³ Ý 52 ² , Ñ³ Ûµ³ Ý³ սḩ ñáõÃÛ³ Ý ý ³ Ï áõÉ »ï ÇÙ³ ëÝ³ ß»Ýù, 215 ë»ÝÛ³ Ï :

**Ð»é.ª060 710 629, 055 – 52 - 29 – 36, 55 - 25 – 37,  52 - 29 – 36:**